

Հավելված  
Երևան քաղաքի ավագանու  
2025 թվականի դեկտեմբերի 23-ի  
N460-Ա որոշման

2026



# ԵՐԵՎԱՆԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

# Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիր

## Բովանդակություն

Երևանի քաղաքապետի ուղերձ .....	2
1. Զարգացման գերակայություններ.....	4
2. Քաղաքային պլանավորում և քաղաքաշինություն .....	5
3. Ենթակառուցվածքներ և շարժունակություն .....	6
4. Սոցիալական բարեկեցություն և մարդկային կապիտալ .....	7
5. Շրջակա միջավայր և կլիմայի գործողություններ.....	8
6. Խելացի քաղաք և թվային փոխակերպում .....	9
7. Ինստիտուցիոնալ զարգացում .....	10
8. Արտաքին կապեր.....	10
9. Ռազմավարական հաղորդակցություն և հանրային կապեր .....	10
10. Ֆինանսական ուրվագիծ .....	12
11. Մոնիտորինգ, գնահատում և հաշվետվողականություն .....	14

## Երևանի քաղաքապետի ուղերձ

Երևանի սիրելի բնակիչ,

Երևանի զարգացման 2026 թվականի ծրագիրը մեր քաղաքի ապագայի համարձակ և հավակնոտ տեսլականի իրականացման գործառնական պլանն է՝ մարմնավորելով ենթակառուցվածքային զարգացման ու արդիականացման, քաղաքային նորարարության և տեխնոլոգիաների զարգացման, սոցիալ-մշակութային հարուստ ժառանգության պահպանման ու զարգացման ներդաշնակեցված օրակարգը:

Ծրագրի առանցքում դրված է Երևանի փոխակերպումը դեպի ավելի խելացի, դիմակայուն և մարդակենտրոն ապագա: Դրա ձևավորման հիմքում նշանակալի են եղել քաղաքացիների հետ շարունակական երկխոսության, կարիքների ու սպասելիքների վերլուծության արդյունքները, որոնք արտացոլում են մայրաքաղաքի զարգացման ընթացիկ խնդիրները, իրական հնարավորություններն ու պատկերացումները:

Նախորդ տարվա ընթացքում կարևոր ծրագրեր ենք իրականացրել և մեկնարկել՝ հասնելով տեսանելի և շոշափելի արդյունքների: Նշանակալի ներդրումների շնորհիվ վերակառուցվել և բարեկարգվել են քաղաքային ճանապարհներ և կամուրջներ, շարունակական արդիականացվում է հասարակական տրանսպորտային համակարգը՝ հագեցվելով նոր շարժակազմերով, կառավարման թվային լուծումներով և վերահսկողության իրավական-վարչական մեխանիզմներով՝ դարձնելով քաղաքային շարժունակությունն ավելի հարմարավետ, արդյունավետ և հաշվետու: Երևանի զբոսայգիներն ու կանաչ տարածքները նոր շունչ են ստանում՝ շարունակական ներդրումների միջոցով հաստատուն քայլեր կատարելով դեպի առողջ, էկոլոգիական և որակյալ միջավայրի ձևավորումը:

Մեծ առաջընթաց ենք արձանագրել նաև թվային և խելացի կառավարման ոլորտում՝ ներդնելով ժամանակակից տեղեկատվական համակարգեր և տվյալահեն լուծումներ, որոնք հիմք են ստեղծում արդյունավետ, հաշվետու և թափանցիկ կառավարման համար, ինչպես նաև՝ հնարավորություն են տալիս բնակիչներին՝ դիմել և ստանալ համայնքային ծառայությունների մեծ մասն առցանց՝ ժամանակ խնայելով և բարձրացնելով ծառայությունների որակը:

Շարունակում ենք ջանքերը՝ բարձրացնելու հանրային շենքերի, մասնավորապես՝ մանկապարտեզների և առողջության կենտրոնների էներգաարդյունավետությունն ու սեյսմակայունությունը՝ ապահովելու համար անվտանգ, հարմարավետ և ժամանակակից սոցիալական ծառայություններ յուրաքանչյուր քաղաքացու համար:

Որպես ոչ միայն տնտեսական, գործարար և վարչական, այլև՝ մշակույթի և արվեստի կենտրոն՝ Երևանի զարգացման առանցքում դրվել է մշակութային բազմազանության, արվեստների զարգացման, առողջ ապրելակերպի և ստեղծագործականության քաղաքի հայեցակետը: Այդ նպատակով շարունակաբար արդիականացնում ենք սպորտային և մշակութային ենթակառուցվածքները, խրախուսում երիտասարդների նախաձեռնությունները և նոր շունչ հաղորդում մշակութային կյանքին՝ ձևավորելով մի քաղաք, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կարող է բացահայտել և իրացնել իր ներուժը լիարժեքորեն:

Չնայած նշված և բազմաթիվ այլ ուղղություններով արձանագրված առաջընթացին՝ քաղաքի առջև դեռևս կանգնած են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց հասցեագրումը պահանջում է հետևողական, արդյունքին միտված աշխատանք և նշանակալի ֆինանսական, ինստիտուցիոնալ և մարդկային ռեսուրսներ:

Համոզված եմ՝ զարգացման ծրագրում արտացոլված խոշոր նախաձեռնությունների և տարեկան բյուջեով պլանավորված ընթացիկ ծրագրերի իրագործմամբ ձևավորվում է Երևանի ապագան հենց այսօր՝ համատեղ աշխատանքով, վստահության ու համագործակցաթ հիմքով:

Երևանը մեր տունն է՝ ուրույն կոլորիտով, հարմարավետ ենթակառուցվածքներով, նպաստավոր գործարար միջավայրով, քաղաքի մարդկանց հույզերով ու անհատական պատմություններով, նորացվող բակերում իրենց ակտիվ հանգիստը անցկացնող երեխաներով ու տարեցներով, նորարարության ու ստեղծագործական անսպառ էներգիայով:

**Տիգրան Ավինյան**

**Երևանի քաղաքապետ**

# 1. Զարգացման գերակայություններ

Երևանի զարգացման 2026 ծրագիրը (ԵԶԾ 2026) մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական և տարածական զարգացման ռազմավարական հովանոցային փաստաթուղթ է, որով սահմանվում են առաջիկա ֆինանսական տարում իրականացվելիք խոշոր ծրագրային նախաձեռնություններն ու բարեփոխումները՝ ուղղված քաղաքային կառավարման արդյունավետության բարձրացմանը, ենթակառուցվածքների արդիականացմանը, մարդկային կապիտալի զարգացմանն ու կայուն աճի ապահովմանը:

Ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2023-2028 թվականների ծրագրով ստանձնած հանձնառությունները, ապահովելով արդեն մեկնարկած նախաձեռնությունների շարունակականությունը, առկա ռեսուրսների նպատակային օգտագործումը և համայնքի հետ հաստատված երկխոսության միջոցով ստացված արձագանքներն ու առաջարկները: ԵԶԾ 2026-ը միտված է դառնալու ռազմավարական գործողությունների իրագործման առանցքային փուլ, որտեղ ձևավորվում են ժամանակակից կառավարման նոր մոտեցումներ, ներդրվում են տվյալահեն և թվային լուծումներ, ինչպես նաև ամրապնդվում է համայնքային կառավարման ներառական և թափանցիկ բնույթը:

## Ռազմավարական առաջնահերթություններ

2026 թվականին Երևանի զարգացման քաղաքականությունն իրականացվելու է հետևյալ ռազմավարական ուղղություններով.

- **Քաղաքային պլանավորում և քաղաքաշինություն՝** կենտրոնացած է տարածական զարգացման համաչափության, կառուցապատման նոր մոտեցումների, բազմակենտրոն քաղաքային կառուցվածքի ձևավորման և միջավայրի որակի բարելավման վրա: Նպատակն է ստեղծել հավասարակշռված, անվտանգ և մատչելի քաղաքային տարածքներ:
- **Ենթակառուցվածքներ և շարժունակություն՝** նպատակաուղղված է զարգացնել ինտեգրված տրանսպորտային համակարգ, խթանել հասարակական և հեծանվային շարժունակությունը, բարելավել ճանապարհային և կոմունալ ենթակառուցվածքների որակը՝ խելացի կառավարման գործիքների ներդրմամբ:
- **Սոցիալական բարեկեցություն և մարդկային կապիտալի զարգացում՝** նախատեսում է ապահովել կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների արդիականացում, բարելավել հանրային ծառայությունների հասանելիությունն ու որակը, բարձրացնել բնակչության կյանքի մակարդակը:
- **Շրջակա միջավայր և կլիմայի գործողություններ՝** վերականգնել քաղաքային կանաչ տարածքները, բարձրացնել էներգաարդյունավետությունը, բարելավել թափոնների կառավարման համակարգը՝ ուղղված կայուն, էկոլոգիապես դիմացկուն քաղաքային միջավայրի ձևավորմանը:
- **Խելացի քաղաք և թվային փոխակերպում՝** նպատակն է առաջ մղել թվային կառավարման լուծումները, ընդլայնել տվյալահենք որոշումների կայացման մեխանիզմները և բարձրացնել քաղաքային ծառայությունների արդյունավետությունն ու թափանցիկությունը:
- **Ինստիտուցիոնալ զարգացում և կառավարման բարելավում՝** ուղղված է կառավարման համակարգի կատարելագործմանը, մարդկային ռեսուրսների հզորացմանը, ֆինանսական կառավարման արդյունավետությանը և հանրային հաշվետվողականության բարձրացմանը:

## 2. Քաղաքային պլանավորում և քաղաքաշինություն

Ծրագրի առաջնահերթ ուղղություններից է քաղաքի տարածական և սոցիալ-տնտեսական միջավայրի բարելավումը՝ կրթական, առողջապահական, մշակութային և բնակելի ենթակառուցվածքների զարգացման միջոցով:

Յուրաքանչյուր նախաձեռնություն կարևորվում է ոչ միայն առկա խնդիրների ու մարտահրավերների նորարար լուծումների առաջադրմամբ, այլ նաև քաղաքի երկարաժամկետ զարգացման ռազմավարության շրջանակներում:

Երևանի կայուն և երկարաժամկետ զարգացման համար կարևոր է ունենալ արդիական գլխավոր հատակագիծ: Դրա միջոցով հնարավոր կլինի ապահովել տարածական պլանավորման արդյունավետություն, ներդրումային նախագծերի համակարգված իրականացում և կայուն քաղաքաշինական քաղաքականություն: Այս նպատակով շարունակվում է գլխավոր հատակագծի թվայնացումն ու ինտեգրումը GIS համակարգում՝ ապահովելով առկա տվյալների ճշգրտում, տարածական վերլուծության կատարելագործում և մասնագետների վերապատրաստում:

Սպորտի և մշակույթի զարգացումը կենսական նշանակություն ունի Երևանի համար՝ մեծ նպաստ ունենալով առողջ ապրելակերպի, ազգային արժեքների պահպանման և արդիականացման, միջազգային մրցունակության բարձրացման և զբոսաշրջության հզորացման գործում: Սպորտի ոլորտում նախատեսվում ավարտին հասցնել Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական կենտրոնի կառուցումը՝ Հրազդան մարզադաշտի հարևանությամբ: Նման ժամանակակից սարքավորումներով կահավորված նոր կենտրոնը կծառայի որպես բարձր մակարդակի մարզական բազա՝ նպաստելով և պրոֆեսիոնալ սպորտի, և լայն հանրության ներգրավվածության ակտիվության զարգացմանը:

Ժամանակակից կրթական հաստատությունները ոչ միայն ապահովում են երեխաների դաստիարակությունն ու խնամքը, այլև ստեղծում են հավասար հնարավորություններ՝ անվտանգ կրթական միջավայրում ժամանակակից կրթություն ստանալու համար: Այս համատեքստում գործնական ու ակտիվ շինարարության փուլ է մտնում արդեն Երևանի էներգաարդյունավետության երկրորդ ծրագիրը, որի շրջանակներում ընդհանուր առմամբ առաջիկա 3-4 տախներին կվերակառուցվեն և սեյսմիկ տեսանկյունից կվերազինվեն համայնքային 32 մանկապարտեզներ՝ ապահովելով էներգաարդյունավետ, ժամանակակից և անվտանգ պայմաններ երեխաների մանկություն բարեկեցիկ ապահովման համար: Միջազգային համագործակցությամբ իրականացվող այս ծրագրին զուգընթաց համայնքային միջոցներով տարբեր վարչական շրջաններում կկառուցվեն նաև նոր մուր-մանկապարտեզներ: Նշված ծրագրերի իրականացումը էական ազդեցություն կունենա էներգախնայող, ժամանակակից լուծումներով կրթական ծառայությունների հասանելիության ընդլայնման գործում:

Առողջապահական համակարգում ծառայությունների մատուցման որակը մեծապես որոշում է բնակչության կյանքի մակարդակը: Երևանում նախատեսվում է կառուցել նորագույն տեխնոլոգիաներով հագեցած տարածաշրջանային նշանակության բազմաֆունկցիոնալ բժշկական կենտրոն՝ որը բնակչության համար կապահովի նոր և համալիր ծառայություններով առողջապահական ծառայություններ: Այս ուղղությամբ արդեն իսկ մեկնարկել է միջազգային առաջատար մասնագետների ներգրավվածությամբ տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացման գործընթացը: Մեկնարկել է նաև թվով 6 առողջության կենտրոնների վերակառուցման և սեյսմիկ վերազինման, ժամանակակից սարքավորումների

ներդրման նպատակով համապատասխան նախագծային փաթեթների ձեռքբերման գործընթաց, որի բարեհաջող ավարտից հետո՝ տարեվերջին կիրականացվի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցութային գործընթացը:

Տարածքային համաչափ զարգացումը կարևոր նշանակություն ունի քաղաքի սոցիալ-տնտեսական դինամիկ զարգացման ապահովման համար: Այս համատեքստում առանձնահատուկ դեր է հատկացվում Նորազյուղի զարգացման ծրագրին: Ծրագրի նպատակն է վերափոխել Երևանի Կենտրոնի հարավ-արևմտյան հատվածը՝ նոր բնակելի ժամանակակից քաղաքաշինական լուծումներով, համայնքը դարձնել ներկայանալի կանաչ, հասարակական ու գործարար ժամակակակից միջավայրով: Արդյունքում քաղաքը կունենա վերակենդանացված պատմական թաղամաս, որը վստահաբար իր մեծ ներդրումը կունենա միջազգային չափանիշներին համահունչ կյանքի որակի, գործարար ակտիվության բարձրացման և տուրիզմի զարգացման գործում:

Կասկադը Երևանի մշակութային և զբոսաշրջային խորհրդանիշներից է: Դրա ամբողջական կառուցումն ու արդիականացումը կնպաստի քաղաքի միջազգային ճանաչելիության բարձրացմանը, զբոսաշրջության զարգացմանը և հանրային մշակութային կյանքի հարստացմանը: Մասնավոր ներդրումային ծրագրի շրջանակներում փաստացի կմեկնարկի Կասկադի ամբողջական կառուցման մասշտաբային ծրագրի գործնական փուլը:

### **3. Ենթակառուցվածքներ և շարժունակություն**

Երևանի ճանապարհային ենթակառուցվածքների, տրանսպորտային համակարգի արդիականացումը շարունակում է մնալ քաղաքի զարգացման առաջնահերթ ուղղություններից մեկը: Ուշադրության կենտրոնում է տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման հարցը՝ ոլորտային ծրագրերի նպատակն է ձևավորել խելացի, արդյունավետ և դիմացկուն տրանսպորտային համակարգ, որը կնվազեցնի երթևեկության խցանումները, կբարձրացնի երթևեկության անվտանգությունը:

Տրանսպորտային ենթակառուցվածքների և շարժունակության զարգացման համատեքստում կիրականացվեն նոր ճանապարհների, կամուրջների, ուղեանցների կառուցման նախապատրաստական, այդ թվում՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախագծերի մշակման, իսկ որոշ դեպքերում՝ շինարարական մրցութային հայտարարման աշխատանքներ: 2026 թվականի սկզբից կմեկնարկի Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի շինարարությունը: Կշարունակվեն առկա ճանապարհների հիմնանորոգման, բարեկարգման, ասֆալտպատման, միջին նորոգման աշխատանքները:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումների շրջանակում շարունակվելու է կանգառասրահների, շարժակազմի արդիականացման գործընթացը, հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ամբողջական ներդրման աշխատանքները: Ավարտին կհասցվեն Երևանի էլեկտրական ավտոբուսների ներդրումային ծրագրի հաստատման և վարկային համաձայնագրի շուրջ աշխատանքները՝ նաև հնարավորինս մեկնարկելով ծրագրով նախատեսված որոշ ուղղություններով առաջանցիկ գնումները:

Մետրոպոլիտենի զարգացման, ընդլայնման և արդիականացման ուղղությամբ խոշոր և ռազմավարական նշանակության ներդրումային ծրագրերի գործնական իրագործումը կսկսվի, մասնավորապես՝ Աջափնյակ վարչական շրջանում մետրոպոլիտենի նոր կայարանի շինարարությունը, ինչպես նաև՝ մետրոպոլիտենի արդիականացման նպատակով գնումների գործընթացը՝ ելնելով ֆինանսական հոսքերի հասանելիությունից: Ավարտին կհասցվի

«Աջափնյակ» մետրոյի կայարանի հարակից տարածքում քաղաքաշինական զարգացման հայեցակարգի և ներդրումային ծրագրի մշակումը՝ նպատակ ունենալով մասնավոր ներդրումների ներգրավման և եկամտային հոսքերի ապահովման միջոցով երկարաժամկետում հաշվեկշռել կայարանի կառուցման ուղղությամբ պետական ֆինանսավորումը:

Քաղաքային շարժունակության և կանաչ տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացման նպատակով ավարտին կհասցվեն «Սուրմալու» պայմանական անվանմամբ մետրոյի կայարանի և շրջապատող տարածքի քաղաքաշինական ներդրումային ծրագրի բոլոր վերլուծական աշխատանքները, և կմեկնարկեն ներդրումային բանակցությունները:

Նշված մասշտաբային ներդրումային ծրագրերը նպատակ ունեն ապահովել հուսալի, անվտանգ, ժամանակակից և էկոլոգիապես մաքուր տրանսպորտային ենթակառուցվածք՝ ի նպաստ Երևան քաղաքի տրանսպորտային ցանցի արդյունավետ աշխատանքի, բնակիչների հարմարավետ տեղաշարժի և կյանքի որակի բարելավման, ինչպես նաև՝ քաղաքային ու ազգային մակարդակում կլիմայական ու ցածրածխածնային զարգացման միջազգային հանձնառությունների ապահովման:

#### **4. Սոցիալական բարեկեցություն և մարդկային կապիտալ**

Երևանի զարգացման քաղաքականության կենտրոնում շարունակում է մնալ քաղաքացիների կյանքի որակի բարելավումը՝ սոցիալական արդարության, կրթության, առողջապահության և երիտասարդության զարգացման համատեքստում: Այս առումով առաջնահերթություններից է սոցիալական ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարձրացման ապահովումը, առողջապահական և կրթական ենթակառուցվածքների բարելավումը, սոցիալական պաշտպանության ոլորտում նորարարական մոտեցումների ներդրումը:

Կրթության ոլորտում կներդրվեն ռեսուրսներ ոչ միայն հաստատությունների արդիականացման, այլ նաև կրթական միջավայրի բարելավման և ժամանակակից ուսումնական մեթոդների ներդրման ուղղությամբ: Նպատակն է ձևավորել ներառական, անվտանգ և ստեղծագործ միջավայր, որը կխթանի երեխաների և երիտասարդների հմտությունների զարգացումը՝ ապագայի պահանջներին համապատասխան:

Կշարունակվեն այն ծրագրերը, որոնք միտված են քաղաքային առողջության և բժշկական կենտրոնների տեխնիկական վերազինմանը՝ ժամանակակից սարքերով և բժշկական տեխնոլոգիաներով: Այս քայլը թույլ կտա ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը և բարձրացնել դրանց արդյունավետությունը: Կիրականացվեն նախաձեռնություններ՝ ուղղված դժվարամատչելի, նորագույն և թանկարժեք հետազոտությունների հասանելիության ապահովմանը՝ հատկապես բնակչության առավել խոցելի խմբերի համար:

Այս միջոցառումները կնպաստեն քաղաքային առողջապահական համակարգի ընդհանուր արդյունավետության բարձրացմանը, առողջության պահպանման ծառայությունների որակի բարձրացմանն ու մատչելիության զգալի ընդլայնմանը:

Երևանի մշակութային քաղաքականությունն ուղղված է լինելու քաղաքի մշակութային միջավայրի վերակենդանացմանը, ստեղծարարության և հանրային մասնակցության խթանմանը: Նախատեսվում է արդիականացնել համայնքային մշակութային հաստատությունները, թանգարանները և արվեստի դպրոցները՝ ապահովելով ժամանակակից կրթական և ստեղծագործական պայմաններ: Ծրագրերը կնպաստեն մշակութային ժառանգության պահպանմանը, նորարարության զարգացմանը և Երևանի միջազգային մշակութային ճանաչելիության բարձրացմանը:

Գերակա ուղղություն է համարվում առողջ և ակտիվ ապրելակերպի խթանումը, ինչպես նաև ժամանակակից սպորտային ենթակառուցվածքների զարգացումը: Նախատեսվում է ավարտին

հասցնել Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցումը, որը հնարավորություն կտա ավելի քան 700 երեխայի զբաղվել մարմնամարզությամբ և ակրոբատիկայով՝ ապահովելով միջազգային չափանիշներին համապատասխան պայմաններ:

Այս նախաձեռնությունը կարևոր քայլ է Երևանի՝ որպես տարածաշրջանային սպորտային կենտրոնի դիրքերի ամրապնդման համար: Միաժամանակ կշարունակվեն զանգվածային, հանրապետական և միջազգային մարզական միջոցառումների կազմակերպման ծրագրերը՝ ապահովելով մարզադահլիճների արդիականացում, նոր մարզագույքի ձեռքբերում և տարբեր տարիքային խմբերի և համայնքների բնակիչների հնարավորինս լայն ներգրավվածություն:

Քաղաքի սոցիալական քաղաքականությունը նպատակ ունի ձևավորել հավասար հնարավորությունների, արժանապատիվ կյանքի և սոցիալական համերաշխության վրա հիմնված համայնք: Շարունակվելու են խոցելի և հատուկ կարիքներ ունեցող խմբերի աջակցության ծրագրերը՝ ապահովելով հասանելի և որակյալ սոցիալական ծառայություններ, քաղաքային միջավայրի ֆիզիկական հարմարեցում: Առաջնահերթություն է տրվելու երեխաների և տարեցների իրավունքների պաշտպանությանն ու հոգեբանական աջակցությանը, երիտասարդների զբաղվածության և մասնագիտական վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև զբաղվածության կայունացմանն ուղղված նորարարական նախաձեռնություններին:

Կշարունակվեն նաև սոցիալական հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների հետ համագործակցության ծրագրերը՝ ապահովելով ծառայությունների շարունակականությունը:

Կամրապնդվեն բաց կառավարման սկզբունքները՝ թափանցիկության, հաշվետվողականության, մասնակցայինության և նորարարության խթանման միջոցով: Բաց կառավարման օրակարգի առաջնահերթություններից է բազմակողմ համագործակցության միջոցով՝ կառավարություն-քաղաքացիական հասարակություն համատեղ աշխատանք, բարեփոխումների և քաղաքականությունների ներդաշնակ իրականացումը, որոնք ուղղված են համայնքային զարգացման կայունության և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը:

Բաց կառավարման օրակարգի կարևոր բաղադրիչ է երիտասարդության ակտիվ ներգրավումը՝ «Մոդել Երևան» քաղաքային կառավարման ակադեմիայի միջոցով, որի շրջանակներում նախատեսվում է.

- բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը համայնքային և քաղաքային կառավարման գործընթացների վերաբերյալ,
- զարգացնել համակարգային, կրիտիկական և վերլուծական մտածողություն, հանրային խոսքի և բանակցային հմտություններ,
- ստեղծել ակտիվ երիտասարդական համայնք՝ որպես սոցիալական կապիտալի հարթակ:

Այս օրակարգի իրագործումը կխթանի մասնակցային, թափանցիկ և հաշվետվողական կառավարման մշակույթի հաստատումը Երևան համայնքում, ինչպես նաև կզարգացնի երիտասարդության դերակատարությունը քաղաքային որոշումների կայացման գործընթացներում:

## 5. Շրջակա միջավայր և կլիմայի գործողություններ

Շրջակա միջավայրի պաշտպանությունն ու կլիմայական փոփոխությունների դեմ պայքարը դիտարկվում է կայուն, անվտանգ և դիմակայուն քաղաքի ձևավորման հիմնասյուն: Մեր նպատակ Երևանը դարձնելն է կանաչ, մաքուր և կլիմայական ազդեցություններին դիմակայող

քաղաք, որտեղ բնակչության առողջությունն ու կյանքի որակը բարելավվում է համապարփակ բնապահպանական միջոցառումների միջոցով: Այդ նպատակին հասնելու համար նախատեսվում է նոր զբոսայգիների, այգիների և կանաչ գոտիների ստեղծում՝ ընդգրկելով ինչպես կենտրոնական, այնպես էլ ծայրամասային համայնքներ, գոյություն ունեցող այգիների և հանրային կանաչ տարածքների վերանորոգում և բարեկարգում՝ ապահովելով բազմաֆունկցիոնալ հանգստի հնարավորություններ բոլորի համար, համապարփակ ծառատնկման և կանաչապատման ծրագրերի իրականացում՝ օդի մաքրման և կլիմայի փոփոխության ազդեցության նվազեցման նպատակով:

Քաղաքի համար ծայրահեղ կարևորություն ներկայացնող խնդիրներից է քաղաքում գործող աղբավայրերի փակումը, նոր սանիտարական աղբավայրի ու խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցումը: Խնդրի լուծման նպատակով տարվում են բազմակողմ ինտենսիվ աշխատանքներ: Մասնավորապես, միջազգային ֆինանսական կառույցների հետ ակտիվ երկխոսության արդյունքում ներգրավված խորհրդատվական թիմի կողմից աղբավայրերի փակման և նորի կառուցման համալիր ծրագրի մշակումից հետո նախատեսվում է «Նախագծում-կառուցում» մոդելով մրցույթի անցկացում, որը թույլ կտա արագացնել աղբավայրի կառուցումը՝ նախագծման և շինարարական փուլերը ներառելով մեկ պայմանագրային շրջանակում: Ընթացքում է գտնվում նաև խառը կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման և շահագործման ներդրողի ընտրության բաց հրապարակային երկփուլ մրցութային գործընթացի կազմակերպումը: Քաղաքի կողմից ներդրված անմնացորդ ջանքերի արդյունքում առաջիկայում Երևանը կունենա ժամանակակից, անվտանգ և էկոլոգիապես կայուն թափոնների կառավարման համակարգ: Այն ներառում է քաղաքի աղբավայրերի վերակառուցում, վերամշակման գործարան և աղբի տեսակավորման ու վերամշակման մշակույթի ընդլայնում՝ բնակիչների մասնակցությամբ, ինչը զգալիորեն կնվազեցնի շրջակա միջավայրի աղտոտումն ու կբարձրացնի քաղաքի կենսամակարդակը:

Իրականացվելու են արդեն ամենամյա բնույթ կրող հանրային իրազեկման միջոցառումներ, սեմինարներ, գաղափարների մրցույթներ և հաքաթոններ, նպատակ ունենալով խթանել երիտասարդների պրոակտիվ մասնակցությունը տեղական մակարդակում, ապահովել նորարարական և կանաչ լուծումների ընդարձակ կիրառումը, ամրապնդել կլիմայի փոփոխության և էներգաարդյունավետության ոլորտներում բազմաշահառու երկխոսությունը:

## **6. Խելացի քաղաք և թվային փոխակերպում**

Երևանի արագ զարգացող քաղաքային միջավայրը պահանջում է նորարարական կառավարման մեխանիզմներ և տեխնոլոգիական լուծումներ՝ բնորոշ կառուցապատման աճող տեմպերով, տրանսպորտային հոսքերի ընդլայնմամբ, ծառայությունների բազմազանությամբ և բնակչության թվային լուծումների սպասելիքների արդարացմամբ: Քաղաքային կյանքի ինտենսիվության աճի պայմաններում խելացի տեխնոլոգիաների ներդրումը դառնում է ոչ միայն արդյունավետության բարձրացման, այլև կառավարման որակի, հանրային ծառայությունների մատչելիության և տնտեսական մրցունակության հիմնական գործիքը:

Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանը կարևոր քայլեր է ձեռնարկել թվայնացման ուղղությամբ՝ ավտոմատացնելով բազմաթիվ գործառույթներ, ներդնելով տեղեկատվական և կառավարման համակարգեր, ինչպես նաև ապահովելով քաղաքային ծառայությունների էլեկտրոնային մատչելիություն: Քաղաքապետարանի պաշտոնական կայքը ([www.yerevan.am](http://www.yerevan.am)) արդեն իսկ հանդիսանում է ծառայությունների տրամադրման հիմնական հարթակ, որտեղ քաղաքացիները կարող են դիմել տարբեր ծառայությունների համար առանց ֆիզիկական ներկայության:

Տեխնոլոգիական առաջընթացը Երևանին հնարավորություն է տալիս վերափոխել կառավարման մոդելը՝ այն դարձնելով տվյալահեն, ճկուն և արդյունավետ:

Թվային փոխակերպման շրջանակում նախատեսվում է իրականացնել մի շարք ռազմավարական նախագծեր, որոնք կձառայեն որպես Երևանի կառավարման նորարարական մոդելի հիմք:

## 7. Ինստիտուցիոնալ զարգացում

Երևանի կառավարման արդյունավետության բարձրացումն ու կայուն զարգացման ապահովումը հնարավոր է միայն ամուր և ժամանակակից ինստիտուցիոնալ հիմքերի առկայության պարագայում: Այս ուղղությամբ իրականացվող բարեփոխումները միտված են ոչ միայն վարչական համակարգի արդիականացմանը, այլև համայնքային կառավարման որակի բարելավմանը, հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանը և բնակիչների վստահության ամրապնդմանը:

Ինստիտուցիոնալ բարեփոխումների ռազմավարական նպատակը քաղաքային կառավարման վերակազմավորումն է՝ հիմնված օրենսդրական, կառավարչական, ֆինանսական և մասնակցային համակարգերի խորքային փոփոխությունների վրա:

## 8. Արտաքին կապեր

Զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություններից է միջազգային համագործակցության խորացումն ու արտաքին կապերի համակարգված զարգացումը: Քաղաքը ձգտում է ձևավորել բազմաշերտ գործընկերային ցանց, որը կնպաստի ոչ միայն քաղաքային զարգացման ծրագրերի իրականացմանը, այլև նոր ներդրումային հոսքերի ներգրավմանը, միջազգային փորձի փոխանակմանը, զբոսաշրջային գրավչության բարձրացմանը և Երևանի՝ որպես տարածաշրջանային նորարարական կենտրոնի ճանաչելիության ամրապնդմանը:

Միջազգային համագործակցության ռազմավարական զարգացման և ընդլայնման նպատակն է ապահովել Երևանի ներգրավվածությունը համաշխարհային քաղաքային զարգացման գործընթացներում՝ դառնալով ակտիվ գործընկեր տարբեր միջազգային կառույցներում, քաղաքային ցանցերում և երկկողմ հարաբերություններում: Այս նպատակով քաղաքում կիրականացվեն հետևյալ հիմնական գործողությունները.

- Գործընկերային ցանցի ընդլայնում և դիվերսիֆիկացում
- Երկկողմ և բազմակողմ ծրագրային համագործակցություն
- Ներդրումային և տնտեսական դիվանագիտություն
- Մշակութային զարգացում և զբոսաշրջության խթանում
- Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խորացում

## 9. Ռազմավարական հաղորդակցություն և հանրային կապեր

Երևանի զարգացման ծրագրերի հաջող իրականացումն ու դրանց նպատակային ազդեցության ապահովումը պահանջում է համակարգված և նպատակաուղղված ռազմավարական հաղորդակցություն: Քաղաքային իշխանության և համայնքի միջև փոխվստահելի, բաց և երկկողմանի հաղորդակցությունը ոչ միայն մեծացնում է բնակչության կողմից ծրագրերի

ընդունելիությունը, այլև նպաստում է հանրային ներգրավվածության, թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդմանը:

Այս նպատակով քաղաքապետարանը որդեգրում է հաղորդակցման միասնական քաղաքականություն, որը ներառում է ինչպես ավանդական լրատվամիջոցների, այնպես էլ ժամանակակից թվային հարթակների լիարժեք օգտագործումը՝ ապահովելով բնակիչների, շահագրգիռ կողմերի, գործընկերների և լրատվամիջոցների շարունակական իրազեկվածությունը քաղաքային ծրագրերի, բարեփոխումների և նախաձեռնությունների վերաբերյալ:

Հաղորդակցման ռազմավարության առանցքային ուղղություններն են.

- **Բաց և հասանելի տեղեկատվություն.** քաղաքի զարգացման ծրագրերի նպատակների, ընթացիկ առաջընթացի և ակնկալվող արդյունքների մասին պարբերական հաղորդակցություն բոլոր հանրամատչելի հարթակներով՝ հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ, ինչպես նաև թվային միջավայր՝ սոցիալական ցանցեր և պաշտոնական կայք:
- **Ակտիվ հանրային ներգրավվածություն.** համայնքի անդամներին հնարավորություն ընձեռնել մասնակցել որոշումների կայացման գործընթացին՝ հանրային քննարկումների, հարցումների, լսումների և մասնակցային պլատֆորմների միջոցով:
- **Թափանցիկություն և հաշվետվողականություն.** ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության հրապարակում և բաց հասանելիություն, ներառյալ ֆինանսական կատարողականի, ժամկետների և ազդեցության գնահատման վերաբերյալ:
- **Թվային հաղորդակցման ընդլայնում.** սոցիալական մեդիայի և թվային գործիքների կիրառման ընդլայնում՝ ընդգրկելով տարբեր տարիքային և սոցիալական խմբերին, խթանելով երկկողմանի հաղորդակցությանը և շահագրգիռ կողմերի հարցերին արագ արձագանքելուն:

Համայնքի իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով կշարունակվի Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում ([www.yerevan.am](http://www.yerevan.am)) և սոցիալական հարթակներում (Facebook, Instagram, Telegram) հրապարակվող տեղեկատվական հոսքը: Բացի այդ, խոշոր ենթակառուցվածքային և ռազմավարական նախագծերի վերաբերյալ կկազմակերպվեն հատուկ տեղեկատվական արշավներ՝ հանրային լայն ընդգրկում և հասանելիություն ապահովելու համար:

Տեղեկատվության բազմակողմանի և շարունակական տարածման ապահովման նպատակով կշարունակվեն նաև ավանդական մեդիա գործիքների օգտագործումը՝ շաբաթական հեռարձակվող «Երևան» հաղորդաշարը, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ համագործակցությունը, ինչպես նաև ծրագրային նյութերի տարածումը գործընկեր կառույցների միջոցով: Բացի այդ, կբարելավվի քաղաքապետարանի տեխնիկական հագեցվածությունը՝ համապատասխանեցնելով այն ժամանակակից հաղորդակցման պահանջներին և բարձրացնելով տեղեկատվական աշխատանքի արդյունավետությունը:

Այս բոլոր քայլերը միտված են քաղաքային իշխանության և բնակչության միջև փոխվստահության ամրապնդմանը, քաղաքացիների ակտիվ ներգրավվածության ապահովմանը և Երևանի զարգացման ռազմավարական օրակարգի շուրջ միասնական ընկալման ձևավորմանը:

## 10. Ֆինանսական ուրվագիծ

Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 151,455,005.4 հազ. դրամ, 2025 թվականի հաստատված բյուջեն եկամուտների գծով կազմել է 159,399,554.2 հազ. դրամ: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 94,887,788.0 հազ. դրամ (տե՛ս գծապատկեր 1):


Գծապատկեր 1.



Նախագծով ծախսերի ծավալը նախատեսվել է 156,777,815.5 հազ. դրամ, ինչը 2025 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ նվազել է 2,709,544.2 հազ. դրամով:

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2023-2026 թթ.<sup>1</sup> ներկայացված են ստորև.


Գծապատկեր 2.



<sup>1</sup> 2026 թ. ցուցանիշները հենվում են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի վրա


Գծապատկեր 3.

Բյուջեի եկամուտները  
2023-2026 թթ., հազար ՀՀ դրամ




Գծապատկեր 4.

Բյուջեի ծախսերը,  
2023-2026 թթ., հազար ՀՀ դրամ



Գծապատկեր 5.

Սեփական եկամուտները կշիռը համայնքի բյուջեի  
ընդհանուր եկամուտներում, 2023-2026 թթ., %




Գծապատկեր 6.

Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը,  
2023-2026 թթ., հազար ՀՀ դրամ




Գծապատկեր 7.

Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը,  
2023 - 2026 թթ., հազար ՀՀ դրամ



Գծապատկեր 8.

Բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը,  
2023 - 2026 թթ., հազար ՀՀ դրամ



Երևան քաղաքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրով սկիզբ դրվեց Երևան քաղաքի ֆինանսական համակարգի բարեփոխումների գործընթացին, մասնավորապես, հաշվի առնելով բյուջետավորման արդի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնեց և առաջին անգամ անցում կատարեց ծախսային բյուջետավորումից դեպի ծրագրային մեթոդաբանությամբ բյուջետավորման:

Նման մեթոդաբանությամբ բյուջետավորումն իր տեղն է գտել նաև 2026 թվականի բյուջեի նախագծում՝ որպես համայնքային ծրագրերի տարեկան ֆինանսավորման գլխավոր ուղղորդիչ: Ուղերձին կից փաստաթղթի տեսքով (Աղյուսակ N1, Աղյուսակ N2), ներկայացվում է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն՝ հիմնված ծրագրային բյուջետավորման ձևաչափի և չափանիշների վրա, որոնք համապարփակ տեղեկատվություն են տրամադրում ֆինանսական ռեսուրսների ուղղորդման նպատակների և արդյունքների վերաբերյալ: Բյուջեի կազմումը նման եղանակով համահունչ է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված սկզբունքներին: Մասնավորապես, այն նպատակ է հետապնդում բարձրացնել Երևան քաղաքի ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը, ինչը կօգնի համատեղել և ներդաշնակեցնել ծախսային քաղաքականությունը, միջնաժամկետ ծախսերի և հնգամյա զարգացման ծրագրերը մեկ միասնական փաստաթղթում՝ ապահովելով ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:

## 11. Մոնիտորինգ, գնահատում և հաշվետվողականություն

Երևանի զարգացման ծրագրերի արդյունավետության ապահովման և դրանցից բխող նախաձեռնությունների իրական ազդեցության գնահատման նպատակով կշարունակվի մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականության ամբողջական ինստիտուցիոնալ համակարգի ներդրման գործընթացը: Նոր համակարգը թույլ կտա գնահատել ծրագրերի ազդեցությունն ու արդյունավետությունը՝ հիմնվելով չափելի և կոնկրետ արդյունքային ցուցանիշների վրա, իրականացնել շարունակական վերլուծություն և ներկայացնել հանրությանը բաց և հասանելի հաշվետվություններ՝ բարձրացնելով կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Մոնիտորինգի և գնահատման համակարգի կարևոր բաղադրիչներից է քաղաքացիների գոհունակության պարբերական գնահատումը, որը կիրականացվի տարբեր մեթոդների միջոցով՝ հարցումներ, ֆոկլոր խմբեր, հանրային քննարկումներ և թվային մասնակցային գործիքներ: Գործընթացը թույլ կտա ոչ միայն չափել քաղաքացիների գոհունակությունը ծառայությունների որակից, ենթակառուցվածքների բարելավումից և իրականացվող ծրագրերից, այլ նաև բացահայտել նրանց առաջնահերթություններն ու կարիքները: Ստացված տվյալները կծառայեն որպես ապացուցահեն կառավարման գործիք՝ ապահովելով քաղաքային որոշումների ընդունման մեջ հանրային կարծիքի ներառումը:

Արդյունքում մոնիտորինգի և գնահատման ամբողջական համակարգը կձառայի ոչ միայն ծրագրերի արդյունավետության բարձրացմանը, այլև՝ քաղաքային կառավարման որակի, հանրային վստահության և քաղաքացիական մասնակցության ամրապնդմանը՝ ձևավորելով հաշվետու, բաց և քաղաքացիների կարիքներին արձագանքող կառավարման միջավայր:

**Գործողությունների շրջանակ  
Երևանի զարգացման 2026 թվականի ծրագրի**

hh	Նպատակ / Միջոցառում	Նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Մասնահերթություն (Բարձր, միջին, ցածր)	Մեկնարկ (ամիս/տարի)	Ավարտ (ամիս/տարի)	Գնահատված ծախս(մլն)	Ֆինանսավորման աղբյուր	Պատասխանատու	Համակատարող
<b>1. ԲԱՐՎԱՅՈՒՆ ԴԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԲԱՐԱՔԱԾԻՆՈՒԹՅՈՒՆ</b>											
1.1	<b>Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ</b>	Նպատակ ունեն ձևավորել քաղաքի տարածական զարգացման երկարաժամկետ ուղևորվածությունը՝ ապահովելով բնակավայրերի հավասարաշրջան զարգացումը, քաղաքաշինական ներկայությունների արդյունավետ զգուստրիչումը և շրջապատվածության բնակավայրի անհավասարությունը: Գլխավոր հատակագիծը ծառայում է որպես հիմնական փաստաթուղթ քաղաքի կայուն զարգացման և կառավարման համար:			Բարձր	01.2025թ.	12.2028թ.	250.00	Համայնքային բյուջե	Երևաննախագիծ ՓԲԸ	
1.1.1		Հնտազոտման և նախագծման աշխատանքների իրականացում	Ուսումնասիրությունների ավարտվածության մակարդակ,%	≥95%		01.2025թ.	12.2028թ.				
			Գլխավոր հատակագծի նախնական նախագծի ավարտվածություն,%	100%							
1.1.2		Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն/Գլխավոր հատակագծի ինտեգրում թվային GIS համակարգում	Գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության ավարտվածություն,%	100%		01.2025թ.	12.2028թ.				
			Գլխավոր հատակագծի տվյալների ամբողջական ինտեգրում GIS-ում,%	≥95%							
			GIS շերտերի ստեղծում, շերտ	≥40 շերտ							
1.2	<b>Ալեքերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցում</b>	Հնազդան մարզադպրոցի մոտ (Երևան քաղաքի ԵՊՆԻՆՍՏԻՏՈՒՄԻ թաղամասի ստորոտում, Հնազդանի ձորում գտնվող մարզական գոտու «Հնազդան» մարզադպրոցի հարակից՝ Կոպի-արևմտյան հատված) նոր օլիմպիական հաշվարկի մարզադպրոցի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրի կառավարում, շինարարական աշխատանքների ավարտ, պաշտոնական բացման արարողություն			Բարձր	08.2025թ.	11.2026թ.	5000.00	ՀՀ պետական բյուջե	ԵՎՆ ՇԻԳ ՀՈՒԿ	Երևանի քաղաքապետարան
1.2.1		Երևան քաղաքում առողջ ապրելակերպի խթանում և սպորտային զբոսաշրջության զարգացում	Մտնված 700 երեխայի՝ սպորտային մարմնամարզությանը (գեոարվեստական մարմնամարզություն և ակրոբատիկա) զբաղվելու հնարավորության ընձեռում, սան	700 սան							
1.2.2		Հայաստանի մարմնամարզության ու սպորտի միջազգային հանրահղակում	Միջազգային խոշոր կանխատեսվող մրցաշարերի անցկացում, միջոցառում	7 միջոցառում							
1.2.3		Սպորտային ենթակառուցվածքի ստեղծում	Մրցումային և մարզման ենթակառուցվածքների կառուցում, ըմ	17098 ըմ							
1.3	<b>«Երևանի էներգաարդյունավետության ծրագիր» երկրորդ փուլ</b>	Երևանի թվով 32 մանկապարտեզների և 6 ԱԿ վերակառուցում և հիմնադրուցում էներգաարդյունավետության և սեյսմակայունության ապահովման ժամանակակից լուծումներով, շենքային պայմանների բարելավում, հարմարավետության մակարդակի բարձրացում, անասկան/տարեկան կտրվածքով էներգաձախի նվազում և CO2 արտանետումների կրճատում	Տարեկան կտրվածքով էներգիայի սպառման կրճատում, %	≥30%	Բարձր	04.2024թ.	04.2029թ.	37.1 (Եվրո)	Եվրոպական ներդրումային բանկի վարկային միջոցներ՝ 25 մլն Եվրո Հարևանության ներդրումային հարթակի դրամաշրջանային միջոցներ՝ 10.1 մլն Եվրո Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորում՝ 2 մլն Եվրո	ԵՎՆ ՇԻԳ ՀՈՒԿ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության, գեոմետրի և առողջապահության վարչություններ
			Տարեկան կտրվածքով նորմալացված CO2 արտանետումների կրճատում, տ	2400							
1.3.1	<b>Թվով 32 մարմնակապարտեզների սեյսմիկ արդիականացում, էներգաարդյունավետության բարելավում, վերակառուցում</b>	Նախագծման, հեղինակային հսկողության, տեխնիկական հսկողության և շինարարական աշխատանքների մրցույթների արդյունքների ամփոփում, հայտերի գնահատում, պայմանագրի կնքում և շինարարության մեկնարկ	Մեկնարկված շինարարական աշխատանքներ թվով 13 մանկապարտեզներում, համալիր փորձաքննության ներկայացված թվով 20 նախագծման/սահաշակային փաստաթղթերի փաթեթներ, միավոր	32							
			Մտնված 9300 երեխաներ և համայնքային աշխատակիցներ հնարավորություն կունենան օրական օգտվել սեյսմիկ արդիականացված, էներգաարդյունավետությանը միտված և վերակառուցված մանկապարտեզների բարելավված պայմաններից, թվաքանակ	9300							
1.3.2	<b>Թվով 6 պոլիլինիկաների սեյսմիկ արդիականացում, էներգաարդյունավետության բարելավում, հասանելիության ապահովում և վերակառուցում</b>	Նախագծման, հեղինակային հսկողության, տեխնիկական հսկողության և շինարարական աշխատանքների մրցույթների արդյունքների ամփոփում, հայտերի գնահատում, պայմանագրի կնքում և շինարարության մեկնարկ	համալիր փորձաքննության ներկայացված թվով 6 նախագծման/սահաշակային փաստաթղթերի փաթեթներ, միավոր	6							

			Մոնվազն 241000 բրժժառու և բժշկական անձնակազմ հնարավորություն կունենան օգտվել սեյսմիկ արդիականացված, էներգատրոնալիտոթթանը միտված և վերակառուցված առողջության կենտրոնների բարելավված պայմաններից, թվաքանակ	241000								
1.4	<b>Քաղաքացիների և կենտրոնի կառուցման ծրագիր</b>	Երևան քաղաքում կառուցվող քաղաքացիների հիվանդանոցի կառուցման նպատակ է համայնքի ներ մասնագիտական արտադրական ծառայությունների մատուցում մեկ կենտրոնում ապահովելով բարձրորակ և մասնի բժշկական օգնություն ժամանակակից բժշկական և ամբուլատորիայի համապատասխան: Նորակառուցվող հիվանդանոցը կներկայացնի արդիականացված ենթակառուցվածք, որի միջոցով հնարավոր կլինի արդյունավետորեն կենտրոնացնել ռեսուրսները և ծառայությունները, կստեղծվի ավելի համապարփակ և արդյունավետ արտադրական համակարգ			Բարձր	09.2025թ.	12.2030թ.		Արտաքին արքյուրներ	ԵԿԼ ԾԻԳ ՀՈԱԿ	Երևանի քաղաքապետարանի արտադրական վարչություն	
1.4.1		Տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացում	Տեխնիկատնտեսական հիմնավորված ուսումնասիրություն/հաշվետվություն	1 լիարժեք տեխնիկատնտեսական հիմնավորում		01.2026թ.	06.2026թ.					
1.4.2		Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթի հայտարարում	Մրցութային ընթացակարգի արդյունքում ձեռքբերված նախագծանախահաշվային փաստաթղթեր	Նախագծանախահաշվային մեկ ամբողջական փաթեթի ձեռքբերում		08.2026թ.	12.2026թ.					
1.5	<b>Նորագույն զարգացման ծրագիր</b>	Ծրագրով նախատեսվում է Երևանի Կենտրոնի հարավ-արևմտյան տարածքում /մոտ 82 հա/ Հրազդան կիրճի ներքո և Ծովակալ հատվածի պորտուալով՝ Երևանյան ճեց դեպի Հարթանակի կամուրջ՝ «Դավակի թրոփ»-ի և դրա հարակից մասում քաղաքացիներին բնակելի, գործարար, դիվանագիտական և մշակութային միջազգային կենտրոնի հիմնում մեծածավալ հաստատվական ընդլայն կառուցապատումներ, բնակելի և համապարտային նշանակության հանգստի գոտու ստեղծում	Նորագույն տեղակայման, տնտեսական և ներկայացվածքային զարգացման մակարդակ		Միջին	01.2026թ.	12.2030թ.		Արտաքին արքյուրներ << պետական բյուջե	ԵԿԼ ԾԻԳ ՀՈԱԿ	Երևանի քաղաքապետարանի համապատասխան արտադրականներ	
1.5.1		<< կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 175-Ն որոշման պայմաններին համապատասխան կազմված Հանրային ներդրումային ծրագրի և/կամ թիզնես ծրագրի մշակում և ներկայացում ֆինանսավորման առաջին նպատակով	Կազմված և հաստատման ներկայացված ներդրումային/թիզնես ծրագրի՝ համապատասխան 175-Ն որոշման պահանջներին	Հաստատված ներդրումային/թիզնես ծրագրի՝ մինչև 2026թ.ավարտ		07.2026թ.	12.2026թ.				Երևանի քաղաքապետարանի համապատասխան արտադրականներ	
1.5.2		Գերակա հանրային շահ ճանաչելու մասին << կառավարության որոշման նախագծի մշակում և շրջանառում	<< կառավարության կողմից հաստատման ներկայացված և շրջանառված Գերակա հանրային շահ ճանաչելու որոշման նախագիծ	Գերակա հանրային շահ ճանաչելու մասին << կառավարության կողմից հաստատված որոշում		02.2026թ.	12.2026թ.				Երևանի քաղաքապետարանի համապատասխան արտադրականներ	
1.6	<b>Երևան քաղաքի Կասկադ համալիր տարածքում թանգարանի և հարակից հատվածի բարելավման ծրագիր</b>	Ծրագրի նպատակն է ներկայումս նոր շենք կառուցել Կասկադ-համալիր կառուցի (Ունիանիլիակ) ճարտարապետ Ալեքսանդր Մանանյանի և Նախորդող հեղինակների) գաղափարը, որը մասամբ իրականացվել է, սակայն մնացել անավարտ: Ամրակայնորդ և ընդգծելով հիմնական ժառանգված քաղաքաշինական սկզբունքները (քաղաքի կենտրոնի հաստատվածքային կառուցվածքի կազմավորման հիմնական առաջին վրա առկա որմնաշատյան վայրը) նախատեսվում է Կասկադ-համալիրով քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները (պատմականորեն բնակելի և մշակութային կենտրոնները) անընդհատ կազմակերպման միջոցով՝ կանաչապատ առավել ակտիվ հանրային գոտիներով միմյանց կապել, այդպիսով Կասկադ ճարտարապետական-կորդային համալիրը հասցնել ավարտուն տեսքի			Բարձր	2025	2030	130693.00	Արտաքին արքյուրներ	Երևանի քաղաքապետարան	ԵԿԼ ԾԻԳ ՀՈԱԿ	
1.6.1		Ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին << կառավարության համապատասխան որոշման ընդունում	<< կառավարության կողմից Կասկադ համալիրի ներդրումային ծրագրի հաստատում	<< կառավարության կողմից հաստատված ներդրումային ծրագիր								
1.6.2		Գերակա հանրային շահ ճանաչելու մասին << կառավարության որոշման նախագիծ մշակում և շրջանառում	<< կառավարության հաստատման ներկայացված Գերակա հանրային շահ ճանաչելու որոշման նախագիծ	Գերակա հանրային շահ ճանաչելու մասին << կառավարության կողմից հաստատված որոշում							ԵԿԼ ԾԻԳ ՀՈԱԿ	
